Ամենալավ ճարպն է ստացվում, յերբ խոզերը կերակրվում են գարիով, ցորենով, հաճարով, սերը հանած կաթով, շիջուկով: Յեզիպտացորենը վատ ճարպ է տալիս: Յեզիպտացորենի այդ վնասակար ազդեցությունը պակասացնելու համար նրան տալիս են կերակրման առա-

ջին կիսում, իսկ յերկրորդ կեսից յեզիպտացորենը գարիով են փոխարինում:

Մսի համար կերակրելն ավելի շահավետ է, վորովհետև նա կատարվում է այնպիսի հասակում, յերբ կերած սննդի ամեն մի ֆունտից ստացվում է մսի ամենախոշոր աճումը և համեմատաբար ավելի քիչ ճարպ: Վորքան վոր խոզն ավելի հասակավոր է, նա այնքան շատ կեր է պահանջում իր ծանրության մի ֆունտի աճման համար:

Դանիական նորմաների*) համաձայն խոզերի կերակրման (մսի կամ յուղի) համար բավական է մի գլխին որական հետևյալ չափով կերը, նայած խոզի ծանրության:

Դանիական նորմաները խոզերի համար

Խոզերի ծանրությունը կիլոգրամներով	Կերի միավորների քանակը կամ կիլոգրամները
10	0,6
10—14	0,7
14—18	0,8
18—22	1,0
22—26	1,2
26—32	1,4
32—38	1,6
38—46	1,8
46—56	2,2

Դոյություն ունի խոզերի կերի չափը վորոշելու ավելի ևս պարզ ձև: Սովորաբար կալծում են, վոր ամեն մի 25 կիլոգրամ ծանրության զիմաց հարկավոր է կերի մեկ միավոր: Հետևաբար, որինակ, 60 կիլոգրամ ծանրություն ունեցող խոզի համար հարկավոր է տալ 2,4 միավոր կեր:

Յեղնելով այս տվյալներից, դժվար չէ կերակրվող խոզերի համար կերի ռացիոն կազմելը: Դանիական նորմաներով ոգտվելու ձեռք մենք ցույց ենք տվել խոշոր յեղջուրավոր անասնապահության կազմակերպումը քննելիս:

Խոզերին կերակրելիս լավագույն արդյունքներն են ստացվում, յերբ որական նրանց տրվող սնունդի մեջ $\frac{1}{2}$ -ից վոչ պակասը հացահատիկային կեր է, մոտավորապես $\frac{1}{4}$ արմատապտուղներ են և $\frac{1}{4}$ կաթի մնացորդներ (սերը հանած կաթը, շիջուկ):

Մսի համար կերակրելը տևում է 3 ամսից վոչ ավելի և անպատ-

*) Յուրմալիատի տվյալների համաձայն:

127-87

Հ. А. МЯСНИКОВ
1940

ճառ վերջանում է 9—10 ամսվա մեջ: Հասակավոր խոզերի ավելի յերկարատև կերակրելն ավելի շատ ճարպ է տալիս և քիչ միս:

Յնելով այս տվյալներին, դժվար է հաշվել խոզաբուծության համար պահանջվող կերի քանակը: Մի անգամ ևս կազմակերպչներին ուշադրություն ենք դարձնում խոզերի արածացման համար առվույտանոցներ կազմակերպելու անհրաժեշտությունը:

Տալիս ենք ևս մի քանի խոզաբուծության համար անհրաժեշտ ցուցմունքներ. ընտիր ցեղի խոզերի ծառայության ժամանակամիջոց պետք է ընդունել 3—4 տարի, ունենալ մի այլ խոզ ձեռնալին սաղմնավորում գործադրելիս 20—25 եգերի հանդեպ, աղատ սաղմնավորում գործադրելիս 10 եգերի հանդեպ: Խոզը տարեկան յերկու անգամ է ծնում (գարնանն ու աշնանը): Միջին հաշվով մի խոզից տարեկան պետք է 15 ձագ հաշվել:

ԹՈՂՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մեր յերկրամասի համեմատաբար մեղմ կլիման նպաստում է այդ ճյուղի զարգացման: Մեր յերկրամասի մեծ մասում հացահատիկային տնտեսության գերակշռությունը ապահովում է այդ ճյուղի հաջող ծավալումը: Ծնորհիվ թռչնաբուծության բազմացման ընդունակությունների հազվագյուտ արագություն, այդ ճյուղը կարճ ժամանակամիջոցում կարող է զարգացվել խոշոր չափերով: Թռչնաբուծությունը վարելու սովորական մեթոդները, վոր գործադրվում են գյուղացիական տնտեսության մեջ, պետք է մի կողմ շարժվեն: Ծուռներ պետք է դուրս բերվեն միմիայն ինկուբատորների (ձտեր դուրս բերելու հատուկ մեքենաներ) միջոցով: Միայն այդ պայմանով հնարավոր կդառնա այդ ճյուղը խոտո չափով զարգացնել յեւ ստանալ միահասակ հսեի մեծ խմբեր:

Թռչնաբուծությունը քարձր յեկամտով ճյուղ դարձնել մեր տեղական ցեղերով անհնարին է, վորովհետեւ նրանք քիչ են արտադրում: Անհրաժեշտ է անպատճառ մտցնել արտասահմանյան քարձր յեկամտավոր ցեղեր:

Թռչնաբուծությունը կարող է տարվել հետևյալ ուղղություններով. ձվի համար, մսի և ձվի համար—ծախելով ձվերը և ձտերը և միայն մսի համար, աճեցնելով ձտերին և հետագայում կերակրելով թռչուններին գիրացնելու նպատակով: Ներկայումս ամենայեկամտավորն է համարվում ձվի ուղղությունը: Այդպիսի տնտեսության մասյին ոպե-

րացիաները կայանում են միայն յերիտասարդ աքլորների և անշահավետ ճանաչված հավերի ծախելու մեջ:

Մեր յերկրամասի համար ամենալավ ցեղերն են ճանաչված՝ Լեգգորնը և Ռոդ Այլանդը: Առաջինը ավելի հարմար է յերկրամասի հարավային շրջանների համար, իսկ յերկրորդը—հյուսիսայինների համար, վորպես ցրտից ավելի քիչ ազդվող:

Թռչունների ամառվա խնամքը եժանացնելու նպատակով, նրանց համար, ինչպես և խոզերի համար, անհրաժեշտ է կանանչ արոտատեղեր կազմակերպել: Առվույտանոցները այդ դեպքում ևս անփոխարինելի կլինեն:

Ամառվա լավ արոտատեղեր լինելու դեպքում հացահատիկային կերի ծախսը հավերի համար կլինի հետևյալը. — ձվի ուղղության համար—25 կիլոգրամ, ձվի և մսի ուղղության համար—32 կիլոգրամ:

Ինկուբատորիաների համար լավ շենք պատրաստելը և հավերի համար լույս, տաքացրած շենք ունենալը անհրաժեշտ է:

Հավի ծառայության ժամանակամիջոցը սովորաբար համարվում է 2 տարի, հետևաբար ամեն տարի տնտեսության մեջ 50 տոկոսով յերիտասարդ հավեր կլինեն:

Մի աքլորին գալիս է 10—20 հավ:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՅԵԿԱՄՏԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Անասնապահությունից և նրա դանազան տեսակներից ստացվող ընդհանուր մուտքը կազմվում է ամբողջ արտադրանքի (կաթի, կաշվի, անշահավետ ճանաչված անասունների և այլն սերնդի աճումից ու ծախվելու հասակավոր անասուններից) արժեքից: Այդ ճյուղի և նրա մասնաճյուղերի ծախսերը գումարվում են կերի, անասունների տակ փոխուհյուրի, լծկանների աշխատանքի, բուժման միջոցների արժեքներից, ամեն տարվա վճարումներից, նորոգումներից, ապահովագրությունից, ինվենտարից, շինություններից և տնտեսության ընդհանուր ծախսերի այն մասից, վորը ընկնում է անասնապահական ճյուղի վրա:

ՀԱՏՈՒԿ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐ

Արդյունաբերական այգեգործության և բանջարաբուծության կազմակերպման գործը ամենասերտ կերպով կապված է ներքին շուկայի պահանջների և գտնան հորդացած ջրերով վորոգվող կամ արհեստական վորոգման մատչելի բանջարանոցային հողերի ներկայության հետ:

Սպառման խոշոր շուկաներից հեռու ընկած վայրերում նույնիսկ վերոհիշյալ պայմաններով բանջարաբուծութիւնը անհնար է դարգացնել, ինքն վերամշակող կոնսերվային գործարաններ չկազմակերպվին:

Այգեգործութեան համար հիմնական ծախսումները պրոֆ. Կոնյուկովի տվյալների համաձայն, միջին հաշվով հավասար են 446 ռ. մեկ հեկտարին: Դրանից տունկի նյութի վրա ընկնում է 111 ռ., լծկան ուշժի վրա—20 ռ., աշխատանքային ծախսումների վրա—217 ռ. շենքերի և ինվենտարի ամորտիզացիայի և վերանորոգման վրա—93 ռ. և դանազան նյութերի վրա—25 ռ.:

Այգայիսով այգեգործութիւնը, ինքն աշխատանքի համար ծախսերը չհաշվենք, ափսոսի ճյուղ է, վորը խոշոր փողային ներդրումներ չի պահանջում, սակայն յեկամուտ ստանալը շատ հեռացված է ըստ ժամանակի և սկսվում է 7-րդ տարուց վոչ առաջ:

1 հեկտար խաղողի այգի տնկելու արժողութիւնը կարող է տատանվել 300-ից մինչև 500 ռուբլի:

Մեկ հեկտարի ծախսերը բանջարաբուծութեան մեջ, Յերկրային Պտղաբանջարեղենային միութեան տվյալների համաձայն, կազմում են՝ ջրվող բանջարանոցների համար վոռողման սարքավորումը—190 ռուբ., ջերմանոցների սարքավորումը—132 ռ., տեխնիկական ինվենտարը—58 ռուբ., կենդանի ինվենտարն ու տրանսպորտը—130 ռուբ., իսկ ընդամենը արտադրութեան միջոցների համար ծախսումները կազմում են 510 ռուբ.: Զվոռողվող բանջարանոցներ. տեխնիկական ինվենտարը—58 ռ., կենդանի ինվենտար—60 ռ., տրանսպորտ—70 ռ., իսկ ընդամենը—188 ռ.:

Այս ճյուղերի արդյունքները հաշվի յեն առնվում այնպես, ինչպես և ուրիշ ճյուղերում, միայն այն տարբերութեամբ, վոր այստեղ բաղմամբա տունկերը համարվում են վորպես հիմնական կապիտալ և այդ պատճառով նրանց վրա ամորտիզացիա յե համարվում:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Յեթն մանր տնտեսութեան մեջ վերամշակող ձեռնարկները բոլորովին չեն կարող տեղ ունենալ, ապա խոշորի մեջ, ընդհակառակը, նրանք բացառիկ կարևոր նշանակութիւն են ստանում:

Խոշոր կոլխոզը գյուղատնտեսական մթերքների մեծ խմբեր արտադրելով, բնական է, վոր պետք է դնի դրանց վերամշակման հարցը:

Գյուղատնտեսական մթերքների վերամշակման կազմակերպման գործը կոլխոզում կարող է տալ նրան հետևյալ ոգուտը. կարող է գ.—տ. արտադրանքի արժեքը բարձրացնել, տնտեսութեան մեջ թողնել արտադրութեան ֆնացորդները նրանց նորից արտադրութեան մեջ ոգտագործելու համար և իր անդամների ավելորդ աշխատող ձեռները զբաղեցնել: Նայած տնտեսութեան ուղղութեան և նրա մեջ ստացվող ավելցուկ արտադրանքին, խոշոր կոլխոզում կարող են կազմակերպվել աղորիքներ, յուղագործարաններ, կարագի և պանրի, կոնսերվի գործարաններ, պլատունների չորանոցներ և այլն: Խոշոր կոլխոզի վերամշակող ձեռնարկները կարող են վոչ միայն իրենց մթերքը մշակել, այլ նաև շրջապատող կոլխոզներին: Այդ պատճառով, այդ ձեռնարկների չափերը նախադժեշտ անհրաժեշտ է յեխնել արտադրանքի այն քանակից, վոր կարող է գալ այդ գործարանը, նրան շրջապատող և դեպի նրան ձգտող շրջանից:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԵՆՔԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խոշոր կոլխոզում պարտադիր չէ ինտեգրալ (միասնական) պլաններ ունենալ: Գյուղատնտեսական նշանակութիւն ունեցող շենքերի մի կենտրոնում հավաքել վոչ միայն վորեն է յեկան ոգուտ չի տալիս, այլ ընդհակառակը, այդ կենտրոնացումը կարող է ուղղակի ֆնասակար լինել: Ամեն մի անասնապահական ճյուղը, յեթն նա դարգանում է խոշոր չափերով, ապա նա պահանջում է, վոր վորոշ չափով անջատված դրութեան մեջ գտնվի և շենքերի մոտ ունենա մեծ տարածութիւններ, արածացնելու տեղ կազմակերպելու համար: Սա հավասար չափով վերաբերում է և խոշոր յեղյուրավոր անասուններին և թռչուններին և խոզերին: Նույնը վերաբերում է և այգիներին ու բանջարանոցներին: Նրանք, իրենց մեծութեան պատճառով, պետք է դուրս բերվեն բնակավայրից և նրանց մոտ պետք է անմիջապես կառուցել այդ ճյուղերը սպասարկող շենքերը: Մի խոսքով, խոշոր կոլխոզում վոչ միայն թուլաբարի յե, այլ և ուղղակի անհրաժեշտ է պլանների ուժեղ դիֆերենցիալի (կտոր-կտոր բաժանումը), ըստ վորում բնակարանային և դանազան տնտեսական շենքերը իրար հետ այն առտիճան կապված չալտի լինեն, ինչպես այդ տեղի ունի մանր անհատական տնտեսութեան մեջ: Խոշոր կոլխոզը վորոշ չափով հիշեցնելու յե քաղաքը, վորտեղ բանվորները իրենց գործարաններից բալական մեծ հեռավորութեան վրա յեն ապրում և ամեն որ գնում են իրենց գործարաններն ու ֆարրիկաներն աշխատանքի:

Խոշոր կոլխոզները, վորպես կանոն, պիտի ունենան նաև խոշոր շներքեր: Խոշորութեան այդ պահանջը սովորաբար պահանջուի նաև ավելի հիմնական կառուցումներ: Սակայն, առաջին շրջանում վոչ բոլոր կոլխոզները իրենց ֆինանսական դրութեամբ հնարավորութիւն կունենան կառուցել այդպիսի հիմնական և թանգարժեք շներքեր: Առաջին շրջանում հարկավոր չի ընկնել այդպիսի թանգարժեք շներքերի հետեւից: Շներքերն ինքն ըստ ինքեան մի ծանր բեռ են տնտեսութեան համար, վորոհետև վոչ մի յեկամուտ չեն տալիս: Յեթե կոլխոզն իր արտադրական գործունեութեան սկսի թանգարժեք հիմնական կառուցումներից, դա ճիշտ ճանապարհը կլինի դեպի նրա քայքայումը:

Առաջին նվազ կարելի յի սահմանափակվել ավելի թիթև շներքերով և հետագայում կոլխոզում հետզհետե կուտակուեցնել կազմելով, անցնել ավելի լավ և ավելի թանգարժեք շներքեր:

Շներքերի հաշիվը կարելի յի սկսել այն ժամանակ, յերբ կազմակերպիչին հայտնի յեն մի շարք տվյալներ. ուտելու, կերի և սերմացուի համար կոլխոզում մնացող հացահատիկի քանակը, դանադան անասունների հոտերի կազմն ու քանակը և այլն:

Կառուցումների հաշիվը կազմելիս կարելի յի ոգտովի հետեւյալ տվյալներով:—

Ախոռներ.—Ամեն մի ձիուն պետք է ընկնի 9—10 քառ. մետր տարածութեան, մսուրի յերկարութեանը պետք է լինի $2\frac{1}{2}$ մետր, լայնութեանը $1\frac{1}{4}$ մետր: Մի շարքանոց ախոռների միջանցքի լայնութեանը պետք է լինի $1\frac{1}{2}$ մետր, 2 շարքանոցներում—2 մետր: Տարածութեան ծավալը մի ձիուն պետք է լինի 30—35 խորանարդ մետր:

Անասնաբակեր.—Մի գլխին պահանջվում է 5 քառ. մետր հատակ, մսուրի յերկարութեանը 1,8 մետր և լայնութեանը— $1\frac{1}{4}$ մետր: Աղբահան միջանցքը անասուններն յերկու շարք տեղավորվելու դեպքում— $1\frac{1}{2}$ մետր, կերի միջանցքը— $1—1\frac{1}{4}$ մետր:

Մի գլխին պահանջվում է 15—20 խոր. մետր ներքին ծավալ:

Մի հորթի համար անհրաժեշտ է $1\frac{1}{2}—1\frac{3}{4}$ քառ. մետր հատակ:

Վոչխարի ախոռներ.—Մի գլխին պահանջվում է 1 քառ. մետր:

Խոզաբույներ.—Միջին հաշիվով մի գլխին հարկավոր է 6 քառ. մետր հատակ: Մսուրը հասկավոր խողի համար մոտ—2 քառ. մետր, ձագ ունեցող մայր խողի համար—3 քառ. մետր, նույնչափ տարածութեան է հարկավոր 2 մսի կամ յուղի համար կերակրվող խողերի համար, 3—4 մեկ տարեկան խողեկների համար և 6—7 քառ. մետր կես տարեկանների համար: Խոզաբույնի բարձրութեանը պետք է լինի $2—2\frac{1}{4}$ մետր:

Թռչնաբույներ. Ամենալավ չափն է $1\frac{1}{3}—1\frac{1}{2}$ քառ. մետր մի հավին և 1 քառ. մետր ամեն մի սագին կամ հնդկահավին: Թռչնաբույնի բարձրութեանը պետք է լինի $1\frac{3}{4}—2$ մետր:

Շեմաքաններ.—Մեկ ցնտներին մեկ խորանարդ մետր, Լցված հացահատիկի բարձրութեանը մինչև 4 մետր, հատակի վրա 80—90 ցնտների ճնշումով:

Ինվենսարի պահեստների շենքեր. (տրանսներ).—Սրանց չափը կարելի յի հաշիվել հետեւյալ տվյալներից. մեկ և բազմախոփանի գութանները բռնում են 1—2 քառ. մետր, հնձող մեքենաները—4—5 քառ. մետր, տրակտորները 5—6 քառ. մետր:

Շներքերի արժեքը կարող է շատ տատանվել, նայած շինանյութին, վորից նրանք կառուցվում են և կառուցման ձևին: Որինակ, կոլխոզիկների մասնակի կամ լիակատար մասնակցութեանը շինարարական աշխատանքներին կարող է շատ ուժեղ չափով եժանացնել շինարարութեանը:

Կառուցումների արժեքի վերաբերյալ անհրաժեշտ է ոգտովի տեղական վործառութեան տվյալներով և շրջանային շինարարական գրասենյակի տեղեկութեաններով:

ԱՂԻՍՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Աշխատանքի ճշգրիտ կազմակերպումը խոշոր կոլխոզում, վորտեղ մեծ քանակութեամբ մարդիկ պիտի կենտրոնացվեն, կոլխոզի արտադրական գործունեութեան հաջող ծավալման վճռական պայմանն է հանդիսանում: Կազմակերպիչի հիմնական խնդիրը կայանում է նրանում, վոր գտնի աշխատանքի կազմակերպման այնպիսի ձևերն ու մեթոդները, վորոնք ապահովում են ամենաբարձր արտադրողականութեանը և վորակը: Անհրաժեշտ է ձգտել հնարավորութեան չափ ավելի լիակատար ոգտագործելու կոլխոզիկների աշխատանքը:

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ (ԶԱՓԵՐԸ)

Ամեն մի աշխատավորի աշխատանքի արտադրողականութեանը կարող է կարգավորվել կոլխոզի յուրաքանչյուր անդամի համար պարտադիր արտադրանքի նորմաներով: Այդ նորմաների թերակատարումը համապատասխան չափով պետք է պակասեցնի աշխատավարձը և, ընդհակառակը, նորմաների գերակատարումը պահպանելով աշխատանքի

վորակը, պետք է ուղեկցվի աշխատավարձի բարձրացումով: Այդպիսի սխտեմը ամուր հիմք է տալիս կոլխոզներում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար:

Այդ պատճառով ամեն մի կոլխոզ բնական պայմաններին և արտադրության միջոցներին համապատասխան զանազան տեսակի աշխատանքների համար արտադրական նորմաներ պիտի մշակի: Արտադրանքի որինակելի նորմաները տրվում են կոլխոզների համար ներքին կարգապահության կանոնների մեջ:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ձի կարելի ներկա մոմենտում բոլոր տեսակի աշխատանքների համար բոլորովին միատեսակ աշխատավարձ նշանակել: Որինակ, չի կարելի թեթև և ծանր աշխատանքների համար, կվալիֆիկացիա (վորակյալ աշխատանք) պահանջող և այդպիսին չպահանջող աշխատանքների համար միևնույն աշխատավարձը նշանակել: Աշխատավարձի հավասարեցման սխտեմի ժամանակ բոլորը կձգտեն դեպի ավելի թեթև և հեշտ աշխատանքները:

Աշխատանքի արտադրողականությունը և վորակը բարձրացնելու համար բոլորովին անհրաժեշտ է աշխատանքների զնահատում սահմանել, կազմելով մի վորոշ շարքավոր ցանց և զանազան աշխատանքների գընահատմանը տալով դրամական արտահայտություն:

Դյուղատնտեսական խոշոր արտադրությունը իր բարձր տեխնիկայով, դարգացած ճյուղերով և արտադրության բարձրությամբ, պահանջում է աշխատանքի խոշոր բաժանում կոլխոզի անդամների միջև, այդ աշխատանքի մասնագիտականացում և բաղմաթիվ դեպքերում նրա կատարողների վորակավորում:

Այդ պատճառով բոլորովին անհրաժեշտ է գնտհատական ցանց սահմանել զանազան աշխատանքների համար տարբեր աշխատավարձով:

Կոլխոզներից շատերը բավական են համարում 3 կարգանի ցանց ունենալ աշխատանքների հասարակ բաժանումով՝ ծանր, միջին և թեթև, ըստ վորում այդ աշխատանքների վարձատրության տարբերությունը աննշան է: Այդպիսի պարզեցրած ցանցը չի ընդգրկում մի շարք բավական մեծ վորակավորում պահանջող աշխատանքներ, իսկ աշխատավարձի տարբերությունն փոքր լինելը վոչ մի աղակ չի տալիս կոլխոզի անդամներին իրենց աշխատանքի վորակը բարձրացնելու համար:

Սովխոզներում ընդունված է 9 կարգանի ցանցը, ըստ վորի աշխատավարձի տարբերությունը սահմանվում է ինչպես 1 $\frac{3}{4}$:

Խոշոր կոլխոզներում միևնույն տեղություն աշխատանքային ուղի վարձատրության տատանումը պետք է թույլ տալ, զոնե ինչպես 1:3:

Ցիլնելով դրանից և ամենահեշտ աշխատանքների վրա բանվորական ուղի աշխատավարձը վորպես միավոր ընդունելով, կարելի չե ուրիշ աշխատանքների ուղիվարձը, ըստ նրանց ծանրություն և վորակյալ աշխատանքի պահանջի, արտահայտել հետևյալ յոթկարգանի ցանցով՝

1	կարգ—	աշխատանքային ուղի վարձն	ընդունվում է	վորպես—	1.
2	» —	»	»	»	— 1 $\frac{1}{4}$
3	» —	»	»	»	— 2 $\frac{1}{2}$
4	» —	»	»	»	— 3 $\frac{1}{4}$
5	» —	»	»	»	— 2
6	» —	»	»	»	— 2 $\frac{1}{2}$
7	» —	»	»	»	— 3

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏՈՂ ՈՒՅԺԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀԱՆՋԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Աշխատող ուժերի քանակը կոլխոզում վորոշելը շատ հասարակ է: Այդ քանակը վորոշվում է կոլխոզի աշխատունակ անդամների քանակով: Աշխատանքի անընդունակ են համարվում միայն 14 տարեկանից պակաս յերիխաները և 50—55 տարեկանից մեծ ձերուները: Քանի դեռ տնային կենցաղը և հասարակական սնունդը անկազմակերպ է, աշխատող ձեռները մինչև 25 տոկոսը անհրաժեշտ է զեղջել, վորովհետև նրանք, իրենց տնային տնտեսությունը և կենցաղային պահանջները սպասարկելով, արտադրական նպատակների համար չպիտի ոգտագործվեն:

Աշխատանքի պահանջը ամեն տարի հաշվի չե առնվում ըստ արտադրական ծրագրերի, կոլխոզում սահմանված արտադրանքի նորմաների հիման վրա: Պահանջվող աշխատող ուժի այդպիսի հաշվառը կատարվում է տնտեսության ճյուղերով և ժամանակաշրջաններով— զարնանային, ցել բարձրացնելու, հավաքման շրջանի և աշնանային: Ավելի ևս լավ է պահանջվող աշխատող ուժերի հաշվառը կատարել ամեն ամսվա համար: Դա հնարավորություն կտա ավելի ճիշտ կարգավորելու աշխատանքի բաժանումը տարվա ընթացքում:

Յեթե կոլխոզը բաղկացած է մի քանի բաժանմունքներինց (эконом-
ическая—ագարակներից), ապա աշխատանքի պահանջի հաշվառքը պետք է
կատարվի ամեն մի բաժանմունքի համար: Այդպիսի հաշվառքի հիման
վրա աշխատանքների ամենալաված ժամանակամիջոցին այն բաժան-
մունքներին, վորտեղ աշխատող ուժերը պահպանում են, կարելի չի ոգ-
նություն կազմակերպել ի հաշիվ այն բաժանմունքների, վորտեղ աշ-
խատողներին ավելցուկ կա:

Ամեն մի մասնաճյուղում և բաժանմունքում բոլոր աշխատանք-
ները պետք է բաժանել մշտական (ամբողջ տարվա ընթացքում), սե-
զոնային և ժամանակավոր աշխատանքներին: Այդպիսի խմբավորում
կատարելն անհրաժեշտ է, վորպեսզի հնարավոր լինի վորոշ կարգի աշ-
խատողներին կցել մշտական կամ սեզոնային աշխատանքներին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԿՈԼԽՈԶԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Պահանջվող աշխատանքը կոլխոզի անդամների մեջ բաժանելիս
կարելի չի կանգնել լիակատար հավասարեցման ուղիի վրա: Այդ դեպ-
քում աշխատանք-որերով համարված պահանջվող ամբողջ աշխատան-
քը հարկավոր կլինեն հավասարապես բաժանել կոլխոզի բոլոր ան-
դամներին մեջ: Անել այդ և գործնականապես իրագործել մեծ դժվա-
րություն չի պատճառի: Սակայն աշխատանքի այդպիսի հավասարե-
ցուցիչ բաժանումը վորակյալ աշխատողների պահպանության պայման-
ներում, նախ՝ միշտ իրագործել չի կարելի և յիկրորդ՝ այդ դեպքում
պետք կլինեն հրաժարվել չափազանց կարևոր սկզբունքից—աշխատան-
քի մասնագիտականացումից: Մինչդեռ լավ զարգացած մասնաճյուղե-
րով և բարձր տեխնիկայով գյուղատնտեսական խոշոր արտադրության
մեջ նպաստավոր պայմաններ են ստեղծվում այդ սկզբունքի գործադր-
ման համար: Այդ պատճառով խոշոր կոլխոզում աշխատանքի մասնա-
գիտականացումը պետք է գործադրվի ըստ հնարավորության լիակա-
տար չափերով: Մշտական սպասարկում և վորոշ գիտություններ պա-
հանջող մասնաճյուղերը, նույնպես և այն աշխատանքները, վորտեղ
վորոշ վորակավորում է անհրաժեշտ, պետք է կցվեն վորոշ աշխատող-
ներին: Նույնը պետք է անել նաև այն աշխատանքների վերաբեր-
մամբ, վորոնք առանձին բարդություն չեն պարունակում, սակայն
տարվում են ամբողջ տարվա ընթացքում, ինչպես որինակ պտ-
հակությունը:

Աշխատանքի նման բաժանումն անդամների մեջ բաժանմունքներ
չունեցող կոլխոզներում մեծ դժվարությունների չի հանդիպում: Այն-
քառ և այդ գործը մի քանի բաժանմունքների ունեցող խոշոր կոլ-
խոզներում:

Այդ դեպքում անհրաժեշտ է լինում, արտադրական ծրագրի հա-
մաձայն, բանվորական ուժի բաժանել բաժանմունքների, մասնաճյու-
ղերի և ձեռնարկների միջև: Ամեն մի բաժանմունքին հարկավոր և կցել
այդ բաժանմունքի սահմաններում և կամ նրան մոտիկ ապրող կոլխո-
զի անդամներից: Այս հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել դեռ
կոլխոզի հողաշինարարության ժամանակ: Կոլխոզի անդամներին նոր
բնակավայրեր տեղափոխելուց անհրաժեշտ է խուսափել և այդ միջո-
ցին պետք է դիմել միայն ծայրահեղ դեպքում: Յեթե բաժանմունքում
գյուղատնտեսության մի քանի մասնաճյուղեր կան, ապա աշխատող
ուժերի բաժանումը կատարվում է մասնաճյուղերի և ձեռնարկների
միջև ամեն մի բաժանմունքի սահմաններում:

Բանվորական ուժը կազմակերպվում և արտադրական բրիգադներ
բում: Այդ բրիգադների կազմը բնորոշվում է կատարվելիք աշխատանք-
ների բնույթով և պայմաններով:

Այսպես, բրիգադները կարող են լինել տրակտորային, պրոպաշ-
նիների խնամող բրիգադներ, արտերի հավաքման բրիգադներ, բերքը
կաշվելու, բանջարանոցներում, այգիներում աշխատելու, անասուննե-
րին խնամող, կովերին կթող և այլն բրիգադներ:

Կոլխոզի տերրիտորիան հարյուր հեկտարանոց քառակուսիների բա-
ժանված լինելով, աշխատանքի բաժանումը բրիգադների միջև և այդ
աշխատանքների հաշվառքը չափազանց հեշտանում է: Խոշոր կոլխոզնե-
րը սովորաբար ամեն մի 25-50 տան ունենում են մի լիազոր, վորը
կապ է պահպանում կոլխոզի վարչության կամ, յեթե կոլխոզը մի քա-
նի ագարակներ ունի, բաժանմունքի վարիչի հետ: Նույն լիազորը մար-
դիկ և նշանակում բրիգադների մեջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԾԿԱՌՔԸ

Աշխատանքի ճիշտ կազմակերպման հիմք պետք է դնել աշխա-
տանքի և աշխատողների ճիշտ հաշվառքը: Բոլոր աշխատանքները կոլ-
խոզներում պետք է կատարվեն ամենօրյա նարյադների հիման վրա:
Մասնաճյուղերի վարիչները կամ բրիգադիւրները պարտավոր են ստու-
գել աշխատանքը և վարել աշխատանքների հաշվետետը (табель): Այդ
հաշվետետի հիման վրա կոլխոզի հաշվապահությունը վարում է կոլ-

խողի աշխատանքների ընդհանուր գերքը և յուրաքանչյուր աշխատավորի աշխատանքի հաշվառքը:

Այդ գրութիւնների հիման վրա հաշվապահութիւնը հետագայում կ'ուխողի անդամների աշխատանքի վարձն և հաշվում և վճարում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԸ

Կուխողի անդամների աշխատանքը վարձատրվում է կուխողի սպասարանի և կուտակման ֆոնդի այն մասից, վորը հատկացված է կուխողի անդամների աշխատանքի վարձի համար (տես տնտեսութեան արդիւնքների վորոշման գլուխը):

Յեթե կուխողում կարգային ցանց կա, ապա աշխատանքի վարձը չափելու վորպես միավոր ընդունվում է առաջին կարգի մի որվա աշխատավարձը: Յանցով նախատեսված բոլոր աշխատանքները կուխողում ընդունված հարաբերականի համաձայն վերածվում են առաջին կարգի աշխատանքային որերի: Ամբողջ աշխատանքային յեկամուտը հաշվի առնված առաջին կարգի աշխատանքային որերին բաժանելով, վորոշվում է առաջին կարգի աշխատանքային որվա աշխատավարձը անցած գլուղատնտեսական տարվա համար: Գիտենալով մի որվա աշխատավարձը առաջին կարգի համար, դժվար չէ վորոշել որավարձը գնահատական ցանցի և մյուս կարգերի համար: Այդ կարգի որավարձը բազմապատկելով նույն կարգի աշխատած որերի քանակի վրա, կվորոշվի ամեն մի կուխողի անդամի ամբողջ աշխատավարձը: Յեթե կուխողի անդամը տարբեր աշխատանքների յե մասնակցել, ապա նրա տարեկան աշխատանքի վարձը կգումարվի այդ անդամի կատարած գնահատական ցանցի քանակի կարգերի աշխատանքի, վարձերի գումարից:

Աշխատանքի վարձատրութեան նման սխտեմը, յեթե նա չաղկապվում է քանակով և վորակով լավ աշխատանքի համար կուխողի ջանասիր անդամների պարգևատրման հետ, մենք բոլորովին բավարար ենք համարում, վորպես կուխողի շինարարութեան ներկա ետապում աշխատանքի վարձատրութեան մասսայական ձևը:

Անմիջապես մասսայական դարձնել գործարքային աշխատավարձը ավելի բարդ ձևերով, մեր կարծիքով, առաջիմ ասանաարին է, ի նկատի ունենալով այն սխտեմի բարդութիւնը, ինչպիսին որինակ առաջարկում է ը. Մարտովիցկին:

Այդ սխտեմը կարելի յե մտցնել միայն այն կուխողներում, վորոնք լավ, վորակյալ ղեկավարութիւն ունեն և լավ զրված արտադրա-

կան հաշվառք, վորի տվյալները կարելի յե ոգտագործել գործարքային աշխատանքի վարձի դրույքները վորոշելու համար:

Այս հարցով հետաքրքրուներին մենք առաջարկում ենք կարդալ Մարտովիցկու գերքը. «Գործարքային աշխատավարձի կազմակերպումը կուխողներում»:

ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Բոլոր մասնաձուղերը և ձեռնարկները կազմակերպելուց հետո անհրաժեշտ է վորոշել կուխողի արտադրական կապիտալների չափը: Արտադրութեան հետ կապված կապիտալները (դրամագլուխները) բաժանվում են՝ իմնական յեվ օրջանառու դրամագլուխների: Հիմնական դրամագլուխներին են վերաբերում արտադրութեան այն միջոցները, վորոնք ծառայում են մեկ տարուց ավելի և պահանջում են ամորտիզացիա (գեղջ մաշվելու համար):

Հիմնական դրամագլուխ պետք է համարել. միլիորտցիան (վառգիչ ցանցը), տունկերը, շինութիւնները, անկենդան ինվենտարը, լըծկան անասունները մթերատու կենդանիների հիմնական հոտերը:

Շրջանառու դրամագլուխն են վերաբերում արտադրութեան այն միջոցները, վորոնք ծառայում են մի տարուց պակաս և ծախսվում են են մեկ անգամից, չպահանջելով վոչ մի ամորտիզացիա: Դրանց պետք է վերաբերել. սերմնացունները, կերիւրը, վառելանյութերն ու յուղերը (մեքենաների համար), դանադան բուժական միջոցները, ապա նաև հիմնական դրամագլուխները պահանջելու համար անհրաժեշտ միջոցները, այն է՝ ընթացիկ վերանորոգումները, ապահովագրութիւնը և այլն:

Տնտեսութիւնը կազմակերպելիս առանձնապես կարևոր է հաշվի առնել տնտեսութեան մեջ պահանջվող հիմնական և շրջանառու դրամագլուխները: Արտադրութեան միջոցները (դրամագլուխները) վորոշում են կուխողի արտադրութեան ծավալը և այդ պատճառով դրանց (միջոցների) պակասը կըճատում է նաև կուխողի արտադրական գործունեութիւնը, իսկ դրամագլուխների ավելցուկը, ընդհակառակը, արտադրութիւնը անպետք ծախսերով կծանրաբեռնի: Այդ պատճառով ամեն մի մեքենայի, ամեն մի շենքի և այլն անհրաժեշտութիւնը տնտեսութեան մեջ պետք է ճիշտ հաշվի առնվի:

Կուխողի կազմակերպիչներին անհրաժեշտ է հաշվի առնել վոչ միայն դրամագլուխների պահանջը տնտեսութեան մեջ, այլ և վորոշել

ներանց գումարելու կարգը: Այդ տեսակետից առանձնապես կարևոր է կոլխոզի անդամների միջոցների ավելի շատ ներգրավումը կոլեկտիվ տնտեսութան մեջ:

Միայն ոգտագործելով այդ տեսակետից անդամների բոլոր հնարավորությունները, կարելի չէ խոսել փոխառությունների, կուտակման և տնտեսութան յեկամուտների միջոցով դրամագլուխներ գումարելու մասին:

Կոլխոզի դրամագլուխների մասին լրիվ պատկեր ստանալու համար կազմակերպիչները պետք է կազմեն դրամագլուխների գումարման մի ցանկ, վորտեղ պետք է ցույց տրվի, թե ինչը գումարվելու չէ ի հաշիվ բնակչության միջոցների կուտակման և տնտեսութան յեկամուտների և ինչը փոխառությունների հաշվին:

27. Ա. Մեմադե.— Խորհրդների վերընտրությունների հիմնական խնդիրները	7
28. Խորհրդների վերընտրությունների գործնական խնդիրները	8
29. Ամրապնդիր խորհրդները (պիյեռա)	10
30. Ուտոբնով.— Կուլակության վերացումը և խորհրդների խնդիրները	7
31. Ռոտամիջյան.— Համատարած կոլեկտիվացման ավարտումը և 1931 թ. դարնանացանի կամպանիայի խնդիրները	10
33. Կուտիլով.— Բոլշևիկյան յերկրորդ զարնան մարտական խնդիրները	5
33. Վասիլյան.— 1931 թ. դարնանացանի կամպանիայի զարնանական խնդիրները	5
34. Նոր կենցաղի յերգեր	20

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՑԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուսիս. Կովկ. հայ պրոլետարիատի մշտապես Լուսնացի բանաստեղծությունները:
2. Հյուս. Կովկ. հայկ. պրոլետարիատի ասոցիացիայի անդամների գրվածքները
3. Ինչպես կազմակերպել խոշոր կոլխոզի տնտեսութ. և նրա վարչութ. յունը—3-րդ պր.
4. 16-րդ կուսնամագումարի արդյունքները:
5. Հյուսիսային Կովկասի հնդամակը.— արդյունաբերություն:
6. Խոզարուծության կազմակերպումը կոլխոզում:
7. Կերի հարցը և սխրասցումը:
8. Կենդանաբուծության ավագ բանվորների պարտականությունները:
9. Ջեռնարկ ժխտողագործության համար:
10. Ճագարաբուծություն:
11. Թռչնաբուծություն:
12. Աշխատանքի կազմակերպումը յեվ յեկամանների ռաժանումը կոլխոզում: Լավագույն կոլխոզների փորձը Հյուս. Կովկասում:
13. Տրանսպորտը և կալիչը. տեխնիկական ձեռնարկ:
14. Կոմսոմոլը և կուսակցության խնդիրները:

Գիմիլ՝ Ростов -Д., Буденовский пр., 60, Крайнациздат,

<< Ազգային գրադարան



NL0210146

13396

ԳԻՆՆ Ե 7 ԿՈՊ.

Apr.

3-14/2